ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Պ Ե Տ

«____» _____ 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ
_____ Մ.Անանյան

ՍՑ-ԳԲԽ-38/15 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. թիվ 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.05.2015թ. թիվ 1/73-1/13675-15 գրությամբ ներկայացված «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02508699) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն) 29.05.2015թ. թիվ 1/73-1/13675-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն»

ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու համար:

Վերոհիշյալ գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 26.05.2015թ. թիվ 01/29-793 գրության պատճենը:

2. «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն Կենտրոնին ուղղված 08.06.2015թ. գրությամբ առարկել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված եզրակացության դեմ, համաձայն որի «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն 2015թ. մայիսի 5-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 128525 ՀՀ դրամի չափով: Ընկերությունը հայտնել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չեն ունեցել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 10.12.2015թ. ժամը 15:00-ին ՍՑ-ԳԲԽ-38/15 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչները հայտնեցին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 26.01.2016թ. ժամը 17:00-ին ՍՑ-ԳԲԽ-38/15 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչները հայտնեցին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել, իսկ հայտը ներկայացրել են 06.05.2015թ., թե՝ 05.05.2015թ., հստակ չեն կարող ասել:

Ընկերությունը 02.02.2016թ. Կենտրոնին է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարության Կենտրոնի հարկային տեսչության 02.02.2016թ. թիվ 375/5 տեղեկանքի պատճենը, համաձայն որի «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն 05.05.2015թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել:

3. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 26.05.2015թ. թիվ 01/29-793 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից կազմակերպված շրջանակային համաձայնագրերի միջոցով համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման «ՀՊՏՀ-ՇՀԱՊՁԲ-15/8» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացված եզրակացության, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /05.05.2015թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն:

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը, պատշաճ ծանուցված լինելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 10.12.2015թ. ժամը 15:00-ին և 26.01.2016թ. ժամը 17:00-ին նշանակված նիստերի օրվա, տեղի և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԳԲԽ-38/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 29.05.2015թ. թիվ 1/73-1/13675-15 գրությամբ ներկայացված «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական

ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՊՏՀ-ՇՀԱՊՁԲ-15/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***05.05.2015թ.*** հայտ է ներկայացրել «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (05.05.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 06.05.2015թ. կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 2015թ. մայիսի 5-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

4. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն 2015թ. մայիսի 5-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 128.525 ՀՀ դրամի չափով:

5. «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն Կենտրոնին ուղղված 08.06.2015թ. գրությամբ առարկել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված եզրակացության դեմ, համաձայն որի «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն 2015թ. մայիսի 5-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 128525 ՀՀ դրամի չափով: Ընկերությունը հայտնել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չեն ունեցել:

6. Ընկերությունը 02.02.2016թ. Կենտրոնին է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարության Կենտրոնի հարկային տեսչության 02.02.2016թ. թիվ 375/5 տեղեկանքի պատճենը, համաձայն որի «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն 05.05.2015թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել:

7. Կենտրոնը 08.02.2016թ. թիվ 01/04.1/332-16 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով հայտնել, թե Ընկերությունը 05.05.2015թ. դրությամբ ունեցել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, թե ոչ:

8. Ի պատասխան Կենտրոնի 08.02.2016թ. թիվ 01/04.1/332-16 գրության՝ Նախարարությունը 18.02.2016թ. թիվ 1/73-3/5819-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն /ՀՎՀՀ 02508699/ **05.05.2015թ. դրությամբ** ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

9. ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղարկված 26.05.2015թ. թիվ 01/29-793 գրության և Ընկերության կողմից ներկայացված հայտարարության մեջ, որպես «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու օր, նշված է՝ **06.05.2015թ.**, իսկ Ընթացակարգի հայտերի գրանցամատյանում, որպես «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու օր, նշված է՝ **05.05.2015թ.**:

10. Կենտրոնը 15.12.2015թ. թիվ 01/04.1/3729-15 գրությամբ դիմել է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով հայտնել «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի «ՀՊՏՀ-ՇՀԱՊՁԲ-15/8» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտի ներկայացման օրը՝ պարզաբանելով վերը նշված անհամապատասխանությունը:

11. Ի պատասխան Կենտրոնի 15.12.2015թ. թիվ 01/04.1/3729-15 գրության՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը 30.12.2015թ. թիվ 04/6674-15 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ անհամապատասխանություն տեղի չի ունեցել և ներկայացրել է «ՀՊՏՀ-ՇՀԱՊՁԲ-15/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գրանցամատյանի, ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկված հարցման, ՀՀ ֆինանսների

նախարարությունից ստացված եզրակացության պատճենները, որոնցում որպես «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու օր, նշված է՝ **05.05.2015թ.:**

5. ՍՑ-ԳԲԽ-38/15 պաշտոնական ընթացակարգի բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության թիվ 1/73-1/13675-15 և 1/73-1/35914-15 գրությունը, «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի 08.06.2015թ. Կենտրոնին ներկայացրած գրությունը, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 26.05.2015թ. թիվ 01/29-793 գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

ՀՀ ֆինանսների նախարարութան 18.02.2016թ. թիվ 1/73-3/5819-16 գրության համաձայն՝ «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն /ՀՎՀՀ 02508699/ 05.05.2015թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն 05.05.2015թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ), ըստ ՀՀ ֆինանսների նախարարութան 18.02.2016թ. թիվ 1/73-3/5819-16 գրության, չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն, ուստի գտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության 29.05.2015թ. թիվ 1/73-1/13675-15 գրությամբ ներկայացված «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02508699) գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 29.05.2015թ. թիվ 1/73-1/13675-15 գրությամբ «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02508699) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել՝ Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Պետի տեղակալ՝	Հ. Այունց
Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝	Հ. Ենգոյան
Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ	Մ. Կատվալյան
Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-38/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Դավթյան